

Լեռն ի վեր ուղիղ գիմեմ սըրտազեղ
Դեպ յըստակ գաւառոս արչալուսոյն հեչտ :

Յառաջագուշակ քաղցրաձայն աւաջ՝
Լըսեմ՝ երկնից մէջ կը գանչէ սրավար .
Եւ յարեւելից կ'եննեն ընդ առաջ
Երկնային տեսիլք մըտքիս խանդավառ .

Հեչտագոյն քան այն սիւքն անուշաբոյր ,
Որ իւր կուսական գըգուանօքն անբիծ՝
Կոյումբին ցամաք ճակտին տայր համբոյր ,
Փըչելով յառաջ յետին ոլորտից :

Ո՛վ գուք՝ ելիսեան դաշտացն ապագայ՝
Ներքին փայլակներ , ըզձեր անսահման ,
Որոց այս աշխարհ ոչ մի յարգ չըտայ՝
Ծըլիելով միշտ խուռկ դից օրհասական ,
Ծածկըւեցէք յերգ անդ քերթողի .

Եւ մեղմացուցէք սաստիկ վըշտահար
Իւր արենակցաց արտասուքն աղի ,
Որով պիտ' ջեռնու իւր հանգըստեան քար :

Յակոբ Չանկլլա

Կ Ե Ռ Ա Հ Ա Ս Ա Կ Ի Ե Ր Թ Ո Ղ Ի

ԱՌ ԿԵՆՆՍ

Ո Ղ Զ Ո Յ Ն Կ Ի Ա Ժ Ե Շ Տ Ի



Դըմբազգ բազմական , քանի՛ մեծայայտ

Մի օր երեցայ
Ի կենաց խընճոյս ,
Եւ մեռնիմ ա՛հա :

Մեռնիմ ա՛հա ես , և շիրմիս վերայ ,

Ուր հասնիմ յուշիկ ,
Ոչ որ պիտի գայ
Հեղուլ արասօրիկ :

Ողջն , գաշտք սիրունք . և դուք , ողջ լերուք

Անոյ՛ զաւարիք ,
Անտառաց մ'վ դուք
Հովոցք սընրալիք .

Երկին , զըմբեթարդ խորան մարդկութեան ,

Շըքեղ բընութիւն ,
Չե՛ր վերջին անգամ՝
Հասցէ իմն ողջոյն :

Իցի՛ւ սըրբազան ձեր գեղեցկութիւն

Երկար վայելեն
Բարեկամք սիրուն ,
Որք ձայնիս խուլ են .

Մեռնին բազմամեայ , ու՛ողբոց արժանի

Ըլլայ մահերնին ,
Եւ ձեռք մըտերմի
Փակէ աչքերնին :

Գիյրերս

Թղթ . Մ . ԱժԻՆ . Աւարտ-Լորտ ունիւր
Մ . Ռ . Լորտ-բանին :